ինքնապաշտպանութեան ընդարձակ միջոցներ տրուին հայերին, Թուրքերի նախայարձակումները ինքնին կվերանան։ Եւ յիրաւի. զոնը, աւազակը եթէ տեսնի, որ կարող է անպատիժ կերպով սպանել, կողոպտել, առևանգել, այրել, եթէ մանաւանդ նա զուրկ է բանականութիւնից, էլ ինչու չանէ իւր շահատակութիւնները, ինչու չօգտուի ուրիշի գոյքից և կարողութիւնից։ Պատիժն է միայն, արդարադատութեան սուած անողոք պատիժն է միայն վայրագ մարդուն բանական մարդ դարձնում։

Տուէք ուրեմն հային ինքնապաշտպանութեան ընդարձակ միջոցներ, պատժեցէք, անխնայ կերպով պատժեցէք յանցաւորներին և դուք մի երկու օրում վերջ տուած կլինիք Թուրքական սրածութեան։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

▬ Կովկասեան իշխան փոխարքան Թոյլատրեց «Լուսաւոր» ամսագրի ծրագիրը լրացնել քաղաքական բաժնով։

▬ Գ. Հայկ Տէր Աստուածատրեանցին Թոյլ է տրուած, «Մատենագէտ» անունով մի ամսագիր հրատարակել Թիֆլիսում։ Թերթը լոյս կտեսնի առաջիկայ տարուայ յունուար ամսից։ Ցանկանում ենք յաջողութիւն։

▬ Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Ցոլնանեան օրիորդական դպրոցի տեսուչ ընտրուել է գիտնական պ. Կարապետ Կոստանեանը։ Կարող ենք շնորհաւորել դպրոցի վարչութեան այդ ընտրութեան համար։ Գ. Կոստանեանը օրինակելի և յաջող ընտրութեան համար։ Գ. Կոստանեանը երկար տարիներ վարել է Ներսիսեան դպրոցի և Էջմիածնի Ճեմարանի տեսչական պաշտօնները։

▬ Վերջապէս Գ. Բուրգից ստացուել է հայոց վանական և եկեղեցական կալուածները հայ հոգևոր իշխանութեան յանձնելու ծրագիրը հաստատուած և այս օրերս տեղի կունենայ յանձնումը։

▬ Խմբագրութեանս քարտուղար օր. Նուարդ Աղանեանցը առաջիկայ յունուարից բաց է անում գեղարուեստական արագաստիպ տպարան, ուր տպուելու է և «Լուսաւոր» ամսագիրը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մեծպրգոյ խմբագիր

Աւելի քան երկու տարի է, որ մեր ապաբաղդ հայրենիքը անօրինակ թշուառութիւնների ասպարէզ է դառել։ Նուրբ դիւանագիտութիւն, վայրագ բարբարոսութիւն, խորամանկ և նախանձոտ դրացիութիւն, արեան ու արցունքի անձրևով ուռդե-

ցին Հայն ու Հայաստանը, աւերակների աշխարհում նոր աւերակներ դիզելով։

Սերտ չմնաց, որ չխորտակուէր, այլ չմնաց որ չարտասուէր մեր սիրելի ազգի վերայ տեղացող տառապանքներից։ Սակայն մորեխի կերածից յետոյ արտը նորից պէտք է մշակել որ խպառ չխոպանանայ։ Ամենայն հայ մարդու քաղցրագոյն պարտքն է չթողնել, որ անդաստանը խոպան մնայ, որ աւերակների թագաւորութիւնը տեւական լինի։ Նոցա տակից յարութեան ձայներ պէտք է լսուին, հին հին փառքեր նոր ընձիւղ տան, որով աւերուած դրախտը վերաշինուի։

Այս նպատակին հասնելու համար նահատակ հայ ժողովրդի թշուառ մնացորդին խնամել պէտք է։

Հայ մարդ ենք մենք և խորը խոցուած մեր ազգի թշուառութեամբ, կամենանք մերոնցն օգտակար լինել մեր ազգի ցաքուցրիւ մնացորդին, մեր հրկիզեալ հայրենիքին։ Ի՞նչ կարող էինք անել. առաքեալի խօսքն յիշեցինք. «Մակի և արծաթ չունիմ որ տամ, ինչ որ ունիմ՝ այն պիտի տամ». և մենք որոշեցինք առ այժմ մի մեծահատոր, շքեղ, պատկերազարդ ժողովածու հրատարակել «Աբելի արիւն» վերնագրով և նորա ամբողջ եկամուտը յատկացնել մեր ազգի վերջին աղէտներից թշուառացածներին։

Այդ առթիւ արդէն դիմում ենք արել բազմաթիւ գերմանացի, ֆրանսիացի, անգլիացի, ռուս և հայ ականաւոր պրոֆէսօրներին և հրապարակախօսներին, ինչպէս և մեր ազգի ընտրելագոյն գրագէտներին, մասնակցելու իրանց գրաւոր վաստակներով ներկայ հրատարակութեան և բաղդաւոր ենք, որ արդէն նոցանից շատերի սիրայօժար պատրաստակամութիւնն ենք ընդունել։

Գանձած եկամուտը տնօրինելու է մեր կազմած մնայուն բիւրօն, տեղնուտեղը ուսումնասիրելով ժողովրդի դրութիւնը և բաժանելով նպաստը կարօտեալներին։

Մուտքի և ծախքի վաւերական հաշիւները տարէցտարի հրատարակուելու են առանձին տետրերով։

Այժէն խսկ բացուած է բաժանորդագրութիւն. իւրաքանչիւր հատորի բաժնէգինն է 10 ռուբլի կանխիկ վճարելի։

Այս նպատակով ընդունուում են նաև կամաւոր նուէրներ։

Մեր հրատարակչական մնայուն բիւրօի հասցէն է. Թիֆլիս, տպարան օր. Նուարդ Աղանեանցի Պօլիցէյսկայա, 7, խմբագրութիւն «Աբելի արիւնի»։

Ի դիմաց բիւրօի { Բենիկ վարդապետ
Գիւտ ա. ք. Աղանեան